*Հավելված N 3*

*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*

*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

*Օրինակելի ձև*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Ճամբարակի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Ճամբարակ համայնքի Վահան, Թթուջուր և Գետիկ գյուղական բնակավայրերի ճանապարհների հարթեցման, փոսալցման, անհրաժեշտ ջրահեռացման ապահովման և խճապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով

կազմակերպված **ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-18/2** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018թվականի

հուլիսի 03-ին կնքված N **ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-18/2** պայմանագրում 2018թվականի օգոստոսի 1-ին կատարված

փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

***Փոփոխության առաջացման պատճառ*** Եղանակների ոչ բարենպաստ լինելու պատճառով շինարարական աշխատանքները հնարավոր չէ վերջացնել նախատեսված ժամկետում:

***Փոփոխության նկարագրություն*** Կողմերի միջև կնքվել է համաձայնագիր՝ մատուցման ենթակա աշխատանքները երկարացնել 30 օրով:

***Փոփոխության հիմնավորում*** Փոփոխությունը կատարվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշման համաձայն՝ հիմք ընդունելով Պայմանագրի 1.3-րդ կետը:

Պատվիրատու՝ Ճամբարակի համայնքապետարան

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

***03.07.2018թ. կնքված N «ԳՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-18/2» ծածկագրով «Ճամբարակ համայնքի Վահան, Թթուջուր և Գետիկ գյուղական բնակավայրերի ճանապարհների հարթեցման, փոսալցման, անհրաժեշտ ջրահեռացման ապահովման և խճապատման աշխատանքների կատարման » պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին***

ք.Ճամբարակ << 01>> 08 2018թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Վ. Ադամյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի հիման վրա,այսուհետև /պատվիրատու/մի կողմից և «Շինտեխնիկա» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Սահակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ կատարող), և 03.07.2018թ. կնքված N «ԳՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-18/2» ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 «ԳՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-18/2» ծածկագրով պայմանագրի 1-ին մասով կատարման վերջնաժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանել 2018թ. օգոստոսի 31-ը ներառյալ:

### 2. Այլ պայմաններ

2.1. 03.07.2018թ. կնքված N «ԳՄԾՀ-ԳՀԱՇՁԲ-18/2» ծածկագրով աշխատանքների կատարման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Ճամբարակի համայնքապետարան | « Շինտեխնիկա » ՍՊԸ |
| 1301 ք.Ճամբարակ,Գ.Նժդեհի 125 | ք.Ճամբարակ,Գ.Նժդեհի 187 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության | «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ |
| գործառնական վարչություն | Ճամբարակի մասնաճյուղ |
| Հ/Հ 900182081233 | Հ/Հ 16023005014000 |
| ՀՎՀՀ 08621318 | ՀՎՀՀ 08619101 |
| Վ.Ա.ԱԴԱՄՅԱՆ ________ /ստորագրություն/ Կ.Տ | Ս.Ս.ՍԱՀԱԿՅԱՆ ________ /ստորագրություն/ |